ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

Ընդհանուր բաժին
№ 0171
19 JAN 2021
Կից Նշում

«19» հունվար 2021թ. No 89 - Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 18-Ի ԹԻՎ 4062-Ա, ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի ԹԻՎ 4219-Ա ԵՎ ԴԵԿԵՄԲԵՐԻ 11-Ի ԹԻՎ 4388-Ա ՀՐԱՄԱՆՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ  Ե Մ՝

**1.** Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2020 թվականի նոյեմբեր 18-ի «Հայաստանի Հանրապետությունում դեղերի հետգրանցումային փոփոխությունների հաստատման մասին» N 4062-Ա հրամանի հավելվածում՝ «Տեմոդալ 100մգ, 140մգ, 180մգ և 250մգ դեղապատիճներ» դեղերի «Գրանցման հավաստագրի իրավատեր» կետերի «Մերկ Շարպ և Դոհմ Իդեա ԱԳ, Վեյշտրասե 20, 6006 Լուցերնե» բառերը փոխարինել «Մերկ Շարպ և Դոհմ ԻԴԵԱ ԳմբՀ, Վեյշտրասե 20, 6006 Լուզերն» բառերով և «Տեմոդալ 140մգ և 180մգ դեղապատիճներ» դեղերի «Արտադրանքի անվանումը» կետերի «Թեմոդալ» բառերը փոխարինել «Տեմոդալ» բառերով:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2020 թվականի նոյեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետությունում դեղերի պետական գրանցման մասին» N 4219-Ա հրամանի հավելվածում՝ «Գլյուկոֆաժ ԻքսԱր 1000մգ դեղապատիճներ» դեղի «Թողարկման ձև (փաթեթավորում)» կետի «(60/6x15/)» բառը փոխարինել «(60/6x10/)» բառով:

3. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2020 թվականի դեկեմբերի 11-ի «Հայաստանի Հանրապետությունում դեղերի պետական գրանցման մասին» N 4388-Ա հրամանի հավելվածում՝ «Մոքսոդին 0,4մգ դեղահատեր թաղանթապատ» դեղի «Դեղաչափը» կետի «0,2մգ» բառը փոխարինել «0,4մգ» բառով:

Աշխ. 19.01.21 ժ. 14⁴⁰ ր.

Ա.ԱՎԱՆԵՍՅԱՆ

19.01.2021

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157